



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՒՈՒ ՄԱՐԶԻ ՓԱՄԲԱԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Փամբակ համայնք
ՀՀ, Լոռու մարզ, գ. Փամբակ, +374 98393131, info@pambak.am

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

23 ՀՈՒՆԻՍԻ 2025 թվականի N 0663-Ա

ՀՈՂԱՄԱՍԻ ՆՊԱՏԱԿԱՅԻՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ ՓՈԽԵԼՈՒ, ՓՈՍՏԱՅԻՆ ՀԱՍՅԵ
ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ԵՎ ՊԵՏԱԿԱՆ ԳՐԱՆՑՄԱՆ ՆԵՐԿԱՅԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 43-րդ հոդվածի 3-րդ կետով, 35-րդ հոդված 16-րդ կետով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի թիվ 2387-Ն որոշմամբ հաստատված կարգի 29-րդ կետի «գ» ենթակետով և 48-րդ կետով, Հայաստանի Հանրապետության վարչապետի 2009 թ. դեկտեմբերի 22-ի թիվ 1064-Ա որոշմամբ ստեղծված քաղաքաշինական ծրագրային փաստաթղթերի մշակման աշխատանքները համակարգող միջգերատեսչական հանձնաժողովի 2024 թվականի օգոստոսի 12-ի N 2-17 դրական եզրակացությունը, ՀՀ Լոռու մարզպետի 18 հոկտեմբերի 2024 թ. թիվ 845-Ա որոշումը, Փամբակ համայնքի ավագանու 28 օգոստոսի 2024 թվականի N 096-Ա որոշումը, **որոշում եմ**

1. Փամբակ համայնքի Վահագնի գյուղի վարչական տարածքում գտնվող 06-103-0114-0060 կադաստրային ծածկագրից 0,19711 հա մակերեսով գյուղատնտեսական նպատակային նշանակության, 4 -րդ կարգի արոտավայր գործառնական նշանակության հողամասը փոխադրել բնակավայրերի նպատակային նշանակության, բնակելի կառուցապատման գործառնական նշանակության:

2. Հողամասի սահմանները որոշվում են համայնքի ղեկավարի կողմից հաստատված հատակագծով:

3. Ճանաչել Փամբակ համայնքի սեփականության իրավունքը 06-103-0114-0060 կադաստրային ծածկագրից 0,19711 հա բնակավայրերի նպատակային նշանակության, բնակելի կառուցապատման գործառնական նշանակության հողամասի նկատմամբ:

4. Անշարժ գույքին տրամադրել Փամբակ համայնք, գյուղ Վահագնի, 2 հողամաս փոստային հասցե:

5. Սույն հողամասի նկատմամբ փոխված նպատակային նշանակությամբ իրավունքները ելնելով են պետական գրանցման, որն արտացոլվում է հողային ֆոնդի ընթացիկ հաշվառման տվյալներում և ամենամյա հողային հաշվեկշիռներում:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Ս. ԿՈՍՏԱՆԴՅԱՆ



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՒՈՒ ՄԱՐԶԻ ՓԱՄԲԱԿ ՀԱՄԱՅՆՔԻ ԴԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Փամբակ համայնք
ՀՀ, Լոռու մարզ, գ. Փամբակ, +374 98393131, info@pambak.am

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

24 ՀՈՒՆԻՍԻ 2025թվականի N 0664-Ա

ՀՈՂԱՄԱՍԻ ՆՊԱՏԱԿԱՅԻՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ ՓՈԽԵԼՈՒ ԵՎ ԻՆՔՆԱԿԱՄ
ԿԱՌՈՒՑՎԱԾ ՇԻՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՕՐԻՆԱԿԱՆԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղականի նքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 38-րդ, 42-րդ և 43-րդ հոդվածներով, 18-րդ հոդվածի 1-ին մասի 31-րդ կետով, Հայաստանի Հանրապետության կառավարության 29 դեկտեմբերի 2011 թվականի N 1920-Ն որոշմամբ, հաշվի առնելով Հայաստանի Հանրապետության վարչապետի 2009թ. դեկտեմբերի 22-ի թիվ 1064-Ա որոշմամբ ստեղծված քաղաքաշինական ծրագրային փաստաթղթերի մշակման աշխատանքները համակարգող միջգերատեսչական հանձնաժողովի 2024 թվականի օգոստոսի 12-ի N 2-17 դրական եզրակացությունը, ՀՀ Լոռու մարզպետի 18 հոկտեմբերի 2024 թ. թիվ 845-Ա որոշումը, Փամբակ համայնքի ավագանու 28 օգոստոսի 2024 թվականի N 096-Ա որոշումը, «Անշարժ գույքի հարկով հարկման նպատակով անշարժ գույքի շուկայական արժեքին մոտարկված կադաստրային գնահատման կարգը սահմանելու մասին» 2019 թվականի նոյեմբերի 19-ի ՀՕ-225-Ն օրենքը, Հայաստանի Հանրապետության կառավարության 2006 թվականի մայիսի 18-ի N 912-Ն որոշումը, ՀՀ կառավարության 29 ապրիլի 2021 թ N 698-Ն որոշմամբ սահմանված կարգը, քանի որ կառույցները համապատասխանում են ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 188-րդ հոդվածի 5-րդ կետով սահմանված օրինականացման պայմաններին, կառույցի պահպանումը չի խախտում այլ անձանց իրավունքները և օրենքով պահանջվող շահերը կամ վտանգ չի սպառնում քաղաքացիների կյանքին ու առողջությանը, կառուցված չէ ինժեներատրանսպորտային օբյեկտների օտարման կամ անվտանգության գոտիներում, քաղաքաշինական նորմերի ու կանոնների էական խախտումներով և չի առաջացնում հարկադիր սերվիտուտ պահանջելու իրավունք, հողամասը ընդգրկված չէ ՀՀ հողային օրենսգրքի 60-րդ հոդվածով նախատեսված հողամասերի ցանկում, հաշվի առնելով Աշոտ Արմենակի Անտինյանի դիմումը (ծնված՝ 10.04.1961թ.) դիմումը, «ԳՈՒԳԱՐԱՑ ԱՇԽԱՐՀ» ՍՊԸ-ի կողմից կազմված հողամասի հատակագիծը, չափագրման համաձայնությունը և 2024SMJASE (07.06.2024թ.) մուտքագրման ծածկագրով տեղեկանքը՝ **որոշում եմ**

1. Աշոտ Արմենակի Անտինյանին սեփականության իրավունքով պատկանող 06-070-0090-0002 կադաստրային ծածկագրով 0,30549 հա մակերեսով արդյունաբերության, ընդերքօգտագործման և այլ արտադրական նպատակային նշանակության, արդյունաբերական օբյեկտների գործառնական նշանակության հողամասը փոխադրել բնակավայրի նպատակային նշանակության, բնակելի կառուցապատման գործառնական նշանակության:

2. Հաստատել Աշոտ Արմենակի Անտինյանին սեփականության իրավունքով պատկանող 06-070-0090-0002 կադաստրային ծածկագրով 0,30549 հա բնակավայրերի նպատակային նշանակության բնակելի կառուցապատման գործառնական նշանակության հողամասի և հողամասի վրա առկա շինությունների հատակագիծը՝ համաձայն սույն որոշման հավելված հանդիսացող հատակագծի:

3. Օրինականացնել Հայաստանի Հանրապետության Փամբակ համայնք գյուղ Մարգահովիտ 4-րդ փողոց 22 բնակելի տուն հասցեում գտնվող Աշոտ Արմենակի Անտինյանին սեփականության իրավունքով պատկանող միավորված 0,30549 հա մակերեսով բնակավայրերի նպատակային նշանակության բնակելի կառուցապատման գործառնական նշանակության հողամասում ինքնակամ կառուցված, այլ անձանց իրավունքներն ու օրենքով պահանջվող շահերը չխախտող, առանց քաղաքաշինական նորմերի ու կանոնների էական խախտումների իրականացված և հարկադիր սերվիտուտի իրավունք չառաջացնող 2009 թվականին կառուցված թիվ 1. 316,51 ք/մ արտաքին չափերով բնակելի տունը, թիվ 2. 50,16 ք/մ արտաքին չափերով ջերմոցը, թիվ 3. 53,64 ք/մ արտաքին չափերով զրուցարանը և թիվ 4,5,6. 80,41 ք/մ չափերով պարիսպները:

4. Պարտավորեցնել Աշոտ Արմենակի Անտինյանին (հաշվեհամար՝ 900235422301 ինքնակամ կառույցի օրինականացում) վճարել 2009 թվականին կառուցված ընդհանուր 316,15 ք/մ արտաքին չափերով բնակելի տան օրինականացման վճարը՝ 325373 ՀՀ դրամ և 184,21 ք/մ ընդհանուր մակերեսով օժանդակ շինությունների օրինականացման վճարը՝ 113621 ՀՀ դրամ: Ընդհանուր՝ 438 994 ՀՀ դրամ:

5. Սույն որոշումը ենթակա է պետական գրանցման ՀՀ կառավարությանն առընթեր անշարժ գույքի կադաստրի Լոռու մարզային ստորաբաժանումում:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Ս. ԿՈՍՏԱՆԴՅԱՆ

24 հունիսի 2025

գ. Փամբակ





ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՒՈՒ ՄԱՐԶԻ ՓԱՄԲԱԿ ՀԱՄԱՅՆՔԻ ԴԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Փամբակ համայնք
ՀՀ, Լոռու մարզ, գ. Փամբակ, +374 98393131, info@pambak.am

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

24 ՀՈՒՆԻՍԻ 2025թվականի N 0665-Ա

ՓՈՍՏԱՅԻՆ ՀԱՍՑԵՆԵՐ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի թիվ 2387-Ն որոշմամբ հաստատված կարգի 29-րդ կետի «գ» ենթակետով և 48-րդ կետով՝ **որոշում եմ**.

1. Փամբակ համայնքի տարածքում գտնվող 06-034-0026-0007 կադաստրային ծածկագրով անշարժ գույքին տրամադրել Փամբակ համայնք, գյուղ Դեբեդ, 3-րդ փողոց, 2-րդ նրբանցք, 4 բնակելի տուն փոստային հասցե:

2. Փամբակ համայնքի տարածքում գտնվող 06-034-0040-0006 կադաստրային ծածկագրով անշարժ գույքին տրամադրել Փամբակ համայնք, գյուղ Դեբեդ, 10-րդ փողոց, 1/3 հողամաս փոստային հասցե:

3. Սույն որոշման 1-ին և 2-րդ կետերով տրամադրված հասցեն ենթակա է պետական գրանցման:

4. Սույն որոշումը ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:



ՀԱՄԱՅՆՔԻ ԴԵԿԱՎԱՐ

Ս. ԿՈՍՏԱՆԴՅԱՆ

24 հունիսի 2025
գ. Փամբակ



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՒՈՒ ՄԱՐԶԻ ՓԱՄԲԱԿ ՀԱՄԱՅՆՔԻ ԴԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Փամբակ համայնք
ՀՀ, Լոռու մարզ, գ. Փամբակ, +374 98393131, info@pambak.am

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

24 ՀՈՒՆԻՍԻ 2025թվականի N 0666-Ա

ՓՈՍՏԱՅԻՆ ՀԱՍՑԵՆԵՐ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի թիվ 2387-Ն որոշմամբ հաստատված կարգի 29-րդ կետի «գ» ենթակետով և 48-րդ կետով՝ **որոշում եմ**.

1. Փամբակ համայնքի տարածքում գտնվող 06-034-0055-0002 կադաստրային ծածկագրով անշարժ գույքին տրամադրել Փամբակ համայնք, գյուղ Դեբեդ, 7-րդ փողոց, 5 հողամաս փոստային հասցե:

2. Փամբակ համայնքի տարածքում գտնվող 06-034-0047-0009 կադաստրային ծածկագրով անշարժ գույքին տրամադրել Փամբակ համայնք, գյուղ Դեբեդ, 6-րդ փողոց, 1/1 բնակելի տուն փոստային հասցե:

3. Սույն որոշման 1-ին և 2-րդ կետերով տրամադրված հասցեն ենթակա է պետական գրանցման:

4. Սույն որոշումը ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:



ՀԱՄԱՅՆՔԻ ԴԵԿԱՎԱՐ

Ս. ԿՈՍՏԱՆԴՅԱՆ

24 հունիսի 2025
գ. Փամբակ



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՒՈՒ ՄԱՐԶԻ ՓԱՄԲԱԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Փամբակ համայնք
ՀՀ, Լոռու մարզ, գ. Փամբակ, +374 98393131, info@pambak.am

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

24 ՀՈՒՆԻՍԻ 2025թվականի N 0667-Ա

ՓԱՄԲԱԿ ՀԱՄԱՅՆՔԻ 2025Թ ԲՅՈՒՋԵԻ ԵԿԱՄՈՒՏՆԵՐԻ ԵՎ ԾԱԽՍԵՐԻ
ԵՌԱՄՍՅԱԿԱՅԻՆ ԲԱՇԽՄԱՆ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Բյուջետային համակարգի մասին» Հայաստանի
Հանրապետության օրենքի 33-րդ հոդվածի դրույթներով, առաջնորդվելով Փամբակ
համայնքի ավագանու 24.06.2025 թվականի «Հայաստանի Հանրապետության Լոռու
մարզի Փամբակ համայնքի 2025 թվականի բյուջեի փոփոխությունը հաստատելու
մասին» թիվ 067-Ն որոշմամբ՝ **որոշում եմ**

Հաստատել Փամբակ համայնքի 2025 թվականի բյուջեի եկամուտների և
ծախսերի եռամսյակային բաշխումը՝ համաձայն հավելվածներ 1-ի և 2-ի:



ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Ս. ԿՈՍՏԱՆԴՅԱՆ

24 հունիսի 2025
գ. Փամբակ

Փամբակ համայնքի ղեկավարի <<24 >> հունիսի 2025.- թիվ 0667 -Ա որոշման
 Փամբակ համայնքի 2025թ. Բյուջեի եկամուտային մասի բաշխումը ըստ եռամսյակների

հազար դրամներով

Հոդի NN	Եկամտատեսակները	Հոդի աճի NN	Շրջաններ այդ թվում					վարչական մաս այդ թվում					Փետրային մաս այդ թվում				
			1-ին համայնք	4	5	9 ամիս	տարի	1-ին համայնք	8	9	9 ամիս	տարի	1-ին համայնք	12	13	9 ամիս	տարի
1	2	3															
10000	ԸՆԴԱՄԱՆԸ ԵԿԱՄՈՒՏՆԵՐ		171634.5	446837.7	666847.5	832574.7	171634.5	390894.6	610904.4	776631.6	201.0	111470.4	172522.2	196768.7			
11100	այդ թվում՝ 1.200 ԳՆԲ Ե-Վ ՏՈՒՆՈՒՄԵՆ (տոտ 1110 + տոտ 1120)	7100	12996.3	54032.9	108945.6	117680.8	12996.3	54032.9	108945.6	117680.8	X	X	X	X			
11110	այդ թվում՝ 1.1 Գույքային հարկեր առնչված գույքից (տոտ)	7131	5000.0	20503.1	38753.0	42651.4	5000.0	20503.1	38753.0	42651.4	X	X	X	X			
11111	այդ թվում՝ Գույքահարկ համայնքների վարչական տարածքներում գտնվող շենքերի և շինությունների համար		0.0	0.0	0.0	200.0	0.0	0.0	0.0	200.0	X	X	X	X			
11112	Հողի հարկ համայնքների վարչական տարածքներում գտնվող հողի համար		0.0	0.0	0.0	1500.0	0.0	0.0	0.0	1500.0	X	X	X	X			
11113	Համայնքի բյուջե մուտքագրվող առնչված գույքի հարկ		5000.0	20503.1	38753.0	40951.4	5000.0	20503.1	38753.0	40951.4	X	X	X	X			
11120	1.2 Գույքային հարկեր այլ գույքից	7136	5841.3	28280.6	63510.0	67389.8	5841.3	28280.6	63510.0	67389.8	X	X	X	X			
11121	այդ թվում՝ Գույքահարկ փոխադրամիջոցների համար		5841.3	28280.6	63510.0	67389.8	5841.3	28280.6	63510.0	67389.8	X	X	X	X			
11130	1.3 Տեղական տուրքեր (տոտ) Համայնքի վարչական տարածքում նոր շենքերի, շինությունների և ոչ հիմնական շինությունների շինարարության (ունեությունների) հարկում	7145	2155.0	5249.2	6682.6	7639.6	2155.0	5249.2	6682.6	7639.6	X	X	X	X			
11301	շինությունների և ոչ հիմնական շինությունների շինարարության (ունեությունների) հարկում		50.0	2574.2	2982.6	2982.6	50.0	2574.2	2982.6	2982.6	X	X	X	X			
11302	Համայնքի վարչական տարածքում նոր շենքերի, շինությունների և ոչ հիմնական շինությունների շինարարության (ունեությունների) հարկում		0.0	0.0	0.0	0.0	0.0	0.0	0.0	0.0	X	X	X	X			
11303	տարածքում շենքերի, շինությունների և ոչ հիմնական շինությունների շինարարության (ունեությունների) հարկում		0.0	0.0	0.0	0.0	0.0	0.0	0.0	0.0	X	X	X	X			

1304	Համայնքի վարչական տարածքում, սահմանամերձ և բարձրլեռնային համայնքների վարչական տարածքում, բացառությամբ միջալեռական և հանրապետական նշանակության տվտոմոբիլային ճանապարհների կողմերում, խանութներում և կրթական հիմունքներում, սեղմված բնական կամ հեղուկացված գազների գտնվելու վտանգ	1400,0	1400,0	1400,0	1400,0	1400,0	1400,0	1400,0	1400,0	1400,0	1400,0	1400,0	1400,0	X	X	X	X
1305	Համայնքի վարչական տարածքում, սահմանամերձ և բարձրլեռնային համայնքների վարչական տարածքում գտնվող մտերմախոտ անտառի կտուրում կամ ավտոմեքենաների տեխնիկական սպասարկման և նորոգման ծառայության գտնվելու վտանգ	0,0	0,0	0,0	0,0	0,0	0,0	0,0	0,0	0,0	0,0	0,0	0,0	X	X	X	X
1306	Համայնքի վարչական տարածքում գտնվող մտերմախոտ անտառում	0,0	0,0	0,0	0,0	0,0	0,0	0,0	0,0	0,0	0,0	0,0	0,0	X	X	X	X
1307	Համայնքի վարչական տարածքում ոգելից և ակրիլային խմիչքների և (կամ) ձիաբուսական սպասարկման	400,0	800,0	1600,0	2200,0	400,0	800,0	1600,0	2200,0	400,0	800,0	1600,0	2200,0	X	X	X	X
1308	Իրավաբանական անձանց և անհատ ձեռնարկատերերին	0,0	0,0	0,0	0,0	0,0	0,0	0,0	0,0	0,0	0,0	0,0	0,0	X	X	X	X
1309	Համայնքի վարչական տարածքում անտառի, հանքային սննդի, գվարճանքի, շառմամոլ խաղերի և վիճակախաղերի կազմակերպման օբյեկտներին, խաղասենյակի և բաղնիքների (սառնակների) ժամը 24.00-ից հետո աշխատելու	30,0	60,0	90,0	200,0	30,0	60,0	90,0	200,0	30,0	60,0	90,0	200,0	X	X	X	X
1310	Խոշոր կապիկների համայնքի վարչական տարածքում համայնքային կանոններին համապատասխան հանքային սննդի	25,0	50,0	200,0	430,0	25,0	50,0	200,0	430,0	25,0	50,0	200,0	430,0	X	X	X	X
1311	Կապիկների համայնքի վարչական տարածքում	0,0	0,0	0,0	0,0	0,0	0,0	0,0	0,0	0,0	0,0	0,0	0,0	X	X	X	X

[illegible]

1350	3.5 Վարչական գահավանք (տող 1351 + տող 1352+տող 1353), Տնտեսական վճարներ	7422	3896,1	8900,0	14800,0	20500,0	3896,1	8900,0	14800,0	20500,0	X	X	X	X
1351	Հատկապես վճարներ (տող 13501+տող 13502+տող 13503+Համայնքի տարածքում շենքեր)		3496,1	7100,0	11800,0	16500,0	3496,1	7100,0	11800,0	16500,0	X	X	X	X
13501	կամ շինության արտաքին տեսքը փոփոխող վերանորոգման ծախսեր		50,0	100,0	100,0	100,0	50,0	100,0	100,0	100,0	X	X	X	X
13502	նախագծային փաստաթղթերով նախատեսված շինարարության ֆուտուրիստիկ ամսական ծախսեր		0,0	0,0	0,0	0,0	0,0	0,0	0,0	0,0	X	X	X	X
13503	նախատեսված աշխատանքներն ավարտելուց հետո		200,0	400,0	700,0	1000,0	200,0	400,0	700,0	1000,0	X	X	X	X
13504	շահագործման ֆուտուրիստիկ Համայնքի տնօրինության և ծախսերի մասնակցության		0,0	0,0	0,0	0,0	0,0	0,0	0,0	0,0	X	X	X	X
13505	կազմակերպվող մրցույթների և աճուրդների մասնակցության		100,0	200,0	400,0	600,0	100,0	200,0	400,0	600,0	X	X	X	X
13506	Համայնքի վարչական կառավարման տնօրինությանը Համայնքի կողմից		0,0	0,0	0,0	0,0	0,0	0,0	0,0	0,0	X	X	X	X
13507	արդյունաբերության վճար վճարողների համար արդյունաբերության աշխատանքները կազմակերպվող համայնքի Համայնքի կողմից		1800,0	3600,0	5400,0	7500,0	1800,0	3600,0	5400,0	7500,0	X	X	X	X
13508	իրավահավասար անձանց կամ անհատ ձեռնարկատերերի շինարարական և խոշոր շինարարական և խոշոր շինարարական աշխատանքներն ավարտելուց հետո		0,0	0,0	0,0	0,0	0,0	0,0	0,0	0,0	X	X	X	X
13509	համայնքի տնօրինությանը համայնքի կողմից		0,0	0,0	0,0	0,0	0,0	0,0	0,0	0,0	X	X	X	X
13510	Ջրմուղ-կոյուղու համար այն համայնքներում, որոնք ներառված չեն ջրմուղ-կոյուղու ծախսերի մասնակցության կազմակերպությունների սպասարկման տարածքներում		0,0	200,0	600,0	700,0	0,0	200,0	600,0	700,0	X	X	X	X
13511	Ոռգման ջրի մատակարարման համար այն համայնքներում,		0,0	0,0	0,0	0,0	0,0	0,0	0,0	0,0	X	X	X	X
13512	Համայնքի կողմից կառավարվող բազմաբնակարան շենքերի		0,0	0,0	0,0	0,0	0,0	0,0	0,0	0,0	X	X	X	X

13513	Համայնքային ենթակառուցվածքային մեծագույն ծախսերի համար	1000.0	2000.0	3500.0	5000.0	1000.0	2000.0	3500.0	5000.0	X	X	X	X
13514	Համայնքային ենթակառուցվածքային արտադրողական դասակարգված հաստատությունների (երաժշտական, նկարչական և արվեստի դպրոցներ և այլն) ծախսերի համար	246.1	400.0	800.0	1200.0	246.1	400.0	800.0	1200.0	X	X	X	X
13515	Համայնքի վարչական տարածքում, սակայն համայնքի բնակավայրերից դուրս գտնվող Համայնքային սեփականություն հանդիսացող սահմանափակ և	0.0	0.0	0.0	0.0	0.0	0.0	0.0	0.0	X	X	X	X
13516	Համայնքային սեփականություն հանդիսացող բնակավայրերի	0.0	0.0	0.0	0.0	0.0	0.0	0.0	0.0	X	X	X	X
13517	Համայնքային սեփականություն հանդիսացող բնակավայրերի	0.0	0.0	0.0	0.0	0.0	0.0	0.0	0.0	X	X	X	X
13518	Համայնքի տարածքում, սակայն համայնքի բնակավայրերից դուրս գտնվող Համայնքային սեփականություն հանդիսացող սահմանափակ և	0.0	0.0	0.0	0.0	0.0	0.0	0.0	0.0	X	X	X	X
13519	Համայնքի տարածքում, սակայն համայնքի բնակավայրերից դուրս գտնվող Համայնքային սեփականություն հանդիսացող սահմանափակ և	100.0	200.0	300.0	400.0	100.0	200.0	300.0	400.0	X	X	X	X
13520	Այլ տեղական վճարներ Համայնքի վարչական տարածքում, սակայն համայնքի բնակավայրերից դուրս գտնվող Համայնքային սեփականություն հանդիսացող սահմանափակ և	0.0	0.0	0.0	0.0	0.0	0.0	0.0	0.0	X	X	X	X
1352	Համայնքի տարածքում, սակայն համայնքի բնակավայրերից դուրս գտնվող Համայնքային սեփականություն հանդիսացող սահմանափակ և	400.0	1800.0	3000.0	4000.0	400.0	1800.0	3000.0	4000.0	X	X	X	X
1353	Համայնքի բյուջե, մուտքագրվող այլ վարչական գանձումներ	0.0	0.0	0.0	0.0	0.0	0.0	0.0	0.0	X	X	X	X
1360	Համայնքի բյուջե, մուտքագրվող այլ վարչական գանձումներ	0.0	0.0	0.0	0.0	0.0	0.0	0.0	0.0	X	X	X	X
1361	Համայնքի տարածքում, սակայն համայնքի բնակավայրերից դուրս գտնվող Համայնքային սեփականություն հանդիսացող սահմանափակ և	0.0	0.0	0.0	0.0	0.0	0.0	0.0	0.0	X	X	X	X
1362	Համայնքի տարածքում, սակայն համայնքի բնակավայրերից դուրս գտնվող Համայնքային սեփականություն հանդիսացող սահմանափակ և	0.0	0.0	0.0	0.0	0.0	0.0	0.0	0.0	X	X	X	X
1370	Համայնքի տարածքում, սակայն համայնքի բնակավայրերից դուրս գտնվող Համայնքային սեփականություն հանդիսացող սահմանափակ և	0.0	9933.0	9933.0	9933.0	0.0	9933.0	9933.0	9933.0	X	X	X	X
1371	Համայնքի տարածքում, սակայն համայնքի բնակավայրերից դուրս գտնվող Համայնքային սեփականություն հանդիսացող սահմանափակ և	0.0	0.0	0.0	0.0	0.0	0.0	0.0	0.0	X	X	X	X

0	Բնակարանային շինարարության և կոմունալ ծառայությունների գծով հետադարձական և Բնակարանային շինարարության և կոմունալ ծառայությունների գծով հետադարձական և	14440.00	19643.00	40062.80	40262.80	100.00	200.00	300.00	500.00	14340.00	19443.00	39762.80	39762.80
1	Բնակարանային շինարարության և կոմունալ ծառայությունների գծով հետադարձական և Բնակարանային շինարարության և կոմունալ ծառայությունների գծով հետադարձական և	14440.00	19643.00	40062.80	40262.80	100.00	200.00	300.00	500.00	14340.00	19443.00	39762.80	39762.80
0	Բնակարանային շինարարության և կոմունալ ծառայությունների (այլ դասերի չպատկանող)	0.00	0.00	0.00	0.00	0.00	0.00	0.00	0.00	0.00	0.00	0.00	0.00
1	Բնակարանային շինարարության և կոմունալ ծառայությունների (այլ դասերի չպատկանող)	0.00	0.00	0.00	0.00	0.00	0.00	0.00	0.00	0.00	0.00	0.00	0.00
0	ԱՌՈՂՋԱՊԱՆՈՒԹՅՈՒՆ	0.00	250.00	250.00	250.00	0.00	250.00	250.00	250.00	0.00	0.00	0.00	0.00
0	Բժշկական անոթներ, սարքեր և	0.00	250.00	250.00	250.00	0.00	250.00	250.00	250.00	0.00	0.00	0.00	0.00
1	Դեղատնային անոթներ, սարքեր և	0.00	250.00	250.00	250.00	0.00	250.00	250.00	250.00	0.00	0.00	0.00	0.00
0	Արտահրկերանցողական ծառայություններ	0.00	0.00	0.00	0.00	0.00	0.00	0.00	0.00	0.00	0.00	0.00	0.00
0	Հիվանդանոցային ծառայություններ	0.00	0.00	0.00	0.00	0.00	0.00	0.00	0.00	0.00	0.00	0.00	0.00
0	Հանրային առողջապահական	0.00	0.00	0.00	0.00	0.00	0.00	0.00	0.00	0.00	0.00	0.00	0.00
1	Հանրային առողջապահական ծառայություններ	0.00	0.00	0.00	0.00	0.00	0.00	0.00	0.00	0.00	0.00	0.00	0.00
0	Առողջապահության գծով հետադարձական և	0.00	0.00	0.00	0.00	0.00	0.00	0.00	0.00	0.00	0.00	0.00	0.00
0	Առողջապահության (այլ դասերի)	0.00	0.00	0.00	0.00	0.00	0.00	0.00	0.00	0.00	0.00	0.00	0.00
0	ՀԱՆՐԱՅԻՆ, ՄՇԱԿՈՒՅԹ ԵՎ ԿՐՄՆ	17803.00	36346.00	55260.00	73993.30	17803.00	36346.00	55260.00	73993.30	0.00	0.00	0.00	0.00
0	Հանրային և պարտի ծառայություններ	1760.00	3835.00	5910.00	8040.00	1760.00	3835.00	5910.00	8040.00	0.00	0.00	0.00	0.00
1	Հանրային և պարտի ծառայություններ	1760.00	3835.00	5910.00	8040.00	1760.00	3835.00	5910.00	8040.00	0.00	0.00	0.00	0.00
0	Մշակութային ծառայություններ	12797.20	24620.40	37693.60	65613.30	15703.00	32171.00	49010.00	65613.30	0.00	0.00	0.00	0.00
1	Գրադարաններ	0.00	0.00	0.00	0.00	0.00	0.00	0.00	0.00	0.00	0.00	0.00	0.00
2	Թանգարաններ և ցուցադրանքներ	0.00	0.00	0.00	0.00	0.00	0.00	0.00	0.00	0.00	0.00	0.00	0.00
3	Մշակութային տներ, ակումբներ, կենտրոններ	11147.20	22270.40	33393.60	44516.80	14153.00	28306.00	42460.00	56613.30	0.00	0.00	0.00	0.00
4	Այլ մշակութային կազմակերպություններ	1550.00	3865.00	6550.00	9000.00	1550.00	3865.00	6550.00	9000.00	0.00	0.00	0.00	0.00
5	Սովետ	0.00	0.00	0.00	0.00	0.00	0.00	0.00	0.00	0.00	0.00	0.00	0.00
6	Կինեմատոգրաֆիա	0.00	0.00	0.00	0.00	0.00	0.00	0.00	0.00	0.00	0.00	0.00	0.00
7	Հուշարձանների և մշակութային արժեքների վերականգնում և պահպանում	0.00	0.00	0.00	0.00	0.00	0.00	0.00	0.00	0.00	0.00	0.00	0.00
0	Ռադիո և հեռուստատեսություններ	200.00	200.00	200.00	200.00	200.00	200.00	200.00	200.00	0.00	0.00	0.00	0.00
1	Հեռուստատեսություններ	0.00	0.00	0.00	0.00	0.00	0.00	0.00	0.00	0.00	0.00	0.00	0.00
2	Հրատարակչություններ, խմբագրություններ	200.00	200.00	200.00	200.00	200.00	200.00	200.00	200.00	0.00	0.00	0.00	0.00
3	Տեղեկատվության ձեռքբերում	0.00	0.00	0.00	0.00	0.00	0.00	0.00	0.00	0.00	0.00	0.00	0.00
0	Գրքերի և հասարակական այլ	140.00	140.00	140.00	140.00	140.00	140.00	140.00	140.00	0.00	0.00	0.00	0.00
2	Քաղաքական կուսակցություններ	0.00	0.00	0.00	0.00	0.00	0.00	0.00	0.00	0.00	0.00	0.00	0.00
3	Կրթական և հասարակական այլ	140.00	140.00	140.00	140.00	140.00	140.00	140.00	140.00	0.00	0.00	0.00	0.00
0	Հանգստի, մշակույթի և կրթության գծով	0.00	0.00	0.00	0.00	0.00	0.00	0.00	0.00	0.00	0.00	0.00	0.00
0	Հանգստի, մշակույթի և կրթության (այլ դասերի)	0.00	0.00	0.00	0.00	0.00	0.00	0.00	0.00	0.00	0.00	0.00	0.00
1	Հանգստի, մշակույթի և կրթության (այլ դասերի)	0.00	0.00	0.00	0.00	0.00	0.00	0.00	0.00	0.00	0.00	0.00	0.00
0	ԿԳՈՒԹՅՈՒՆ	42203.50	89651.66	112997.09	156596.02	23816.50	49462.86	72808.29	92160.72	18387.00	40188.80	40188.80	64435.30
0	Նախադպրոցական և տարրական ընդհանուր	41703.50	88151.66	110697.09	154296.02	23316.50	47962.86	70508.29	89860.72	18387.00	40188.80	40188.80	64435.30
1	Նախադպրոցական կրթություն	27888.30	47265.00	69833.40	83413.00	23316.50	47962.86	70508.29	89860.72	18387.00	40188.80	40188.80	64435.30
0	Միջնակարգ ընդհանուր կրթություն	500.00	1350.00	2000.00	2000.00	500.00	1350.00	2000.00	2000.00	0.00	0.00	0.00	0.00
1	Հիմնական ընդհանուր կրթություն	0.00	0.00	0.00	0.00	0.00	0.00	0.00	0.00	0.00	0.00	0.00	0.00
2	Միջնակարգ(ընդհ) ընդհանուր կրթություն	500.00	1350.00	2000.00	2000.00	500.00	1350.00	2000.00	2000.00	0.00	0.00	0.00	0.00



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՒՈՒ ՄԱՐԶԻ ՓԱՄԲԱԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Փամբակ համայնք
ՀՀ, Լոռու մարզ, գ. Փամբակ, +374 98393131, info@pambak.am

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

24 ՀՈՒՆԻՍԻ 2025թվականի N 0668-Ա

ՀՈՂՀԱՏԿԱՑՄԱՆ ՀԻՄՔԵՐԸ ՎԵՐԱԿԱՆԳՆԵԼՈՒ, ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ
ԻՐԱՎՈՒՆՔԸ ՁԵՎԱԿԵՐՊԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով ՀՀ հողային օրենսգրքի 60-րդ հոդվածով, 64-րդ հոդվածի 2-րդ, 8-րդ և 16-րդ կետերով, «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 43-րդ հոդվածով, հիմք ընդունելով Արմեն Հայկազի Սաֆարյանի (ծնված՝ 27/08/1961թ.) դիմումը, «ԳՈՒԳԱՐԱՑ ԱՇԽԱՐՀ» ՍՊԸ-ի կողմից կազմված հողամասի հատակագիծը, Մարգահովիտ գյուղի հողային բարեփոխումների և սեփականաշնորհման տեղական հանձնաժողովի 03.04.1991 թ-ի թիվ 02 որոշումից քաղվածքը, այն հանգամանքը, որ հողամասն ընդգրկված է ՀՀ հողային օրենսգրքի 60-րդ հոդվածով սահմանված հողամասերի և ինժեներատրանսպորտային օբյեկտների օտարման գոտիներում, չի հակասում քաղաքաշինական նորմերին, չի առաջացնում սերվիտուտ. **որոշում եմ՝**

1. Հաստատել Փամբակ համայնքի Մարգահովիտ գյուղի վարչական տարածքում գտնվող 06-070-0363-0049 կադաստրային ծածկագրով 0,688291 հա գյուղատնտեսական նպատակային նշանակության, խոտհարք գործառնական նշանակության հողամասի չափերը՝ համաձայն սույն որոշման հավելվածը հանդիսացող հատակագծի:

2. Վերականգնել և օրենքի ուժով ճանաչել Մարգո Գինոսի Սաֆարյանի (ծնված՝ 20/06/1939թ.), Արմեն Հայկազի Սաֆարյանի (ծնված՝ 27/08/1961թ.), Գայանե Միշայի Բադալյանի (ծնված՝ 30/03/1964թ.), Նելի Արմենի Սաֆարյանի (ծնված՝ 16/06/1989թ.) և Անուշ Արմենի Սաֆարյանի (ծնված՝ 05/10/1990թ.) համատեղ սեփականության իրավունքը 06-070-0363-0049 կադաստրային ծածկագրով 0,688291 հա գյուղատնտեսական նպատակային նշանակության, խոտհարք գործառնական նշանակության հողամասի նկատմամբ:

3. Սույն որոշումից ծագող իրավունքները և պարտականությունները ենթակա են պետական գրանցման ՀՀ անշարժ գույքի կադաստրի կոմիտեում:



ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Ս. ԿՈՍՏԱՆԴՅԱՆ

24 հունիսի 2025
գ. Փամբակ



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՒՈՒ ՄԱՐԶԻ ՓԱՄԲԱԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Փամբակ համայնք
ՀՀ, Լոռու մարզ, գ. Փամբակ, +374 98393131, info@pambak.am

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

24 ՀՈՒՆԻՍԻ 2025թվականի N 0669-Ա

ՀՈՂՀԱՏԿԱՅՄԱՆ ՀԻՄՔԵՐԸ ՎԵՐԱԿԱՆԳՆԵԼՈՒ, ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ
ԻՐԱՎՈՒՆՔԸ ՁԵՎԱԿԵՐՊԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով ՀՀ հողային օրենսգրքի 60-րդ հոդվածով, 64-րդ հոդվածի 2-րդ, 8-րդ և 16-րդ կետերով, «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 43-րդ հոդվածով, հիմք ընդունելով Վաչիկ Խաչիկի Խառատյանի (ծնված՝ 30/01/1957թ.) դիմումը, «ԳՈՒԳԱՐԱՑ ԱՇԽԱՐՀ» ՍՊԸ-ի կողմից կազմված հողամասի հատակագիծը, Մարգահովիտ գյուղի հողային բարեփոխումների և սեփականաշնորհման տեղական հանձնաժողովի 03.04.1991 թ-ի թիվ 02 որոշումից քաղվածքը, այն հանգամանքը, որ հողամասն ընդգրկված է ՀՀ հողային օրենսգրքի 60-րդ հոդվածով սահմանված հողամասերի և ինժեներատրանսպորտային օբյեկտների օտարման գոտիներում, չի հակասում քաղաքաշինական նորմերին, չի առաջացնում սերվիտուտ. **որոշում եմ՝**

1. Հաստատել Փամբակ համայնքի Մարգահովիտ գյուղի վարչական տարածքում գտնվող 06-070-0292-0014 կադաստրային ծածկագրով 0,126049 հա գյուղատնտեսական նպատակային նշանակության, վարելահող գործառնական նշանակության հողամասի չափերը՝ համաձայն սույն որոշման հավելվածը հանդիսացող հատակագծի:

2. Վերականգնել և օրենքի ուժով ճանաչել Վաչիկ Խաչիկի Խառատյանի (ծնված՝ 30/01/1957թ.), Գեղեցիկ Խաչիկի Կարապետյանի (ծնված՝ 02/02/1959թ.), Արթուր Վաչիկի Խառատյանի (ծնված՝ 09/11/1978թ) և Արփիկ Վաչիկի Խառատյանի (ծնված՝ 26/10/1979թ) համատեղ սեփականության իրավունքը 06-070-0292-0014 կադաստրային ծածկագրով 0,126049 հա գյուղատնտեսական նպատակային նշանակության, վարելահող գործառնական նշանակության հողամասի նկատմամբ:

3. Սույն որոշումից ծագող իրավունքները և պարտականությունները ենթակա են պետական գրանցման ՀՀ անշարժ գույքի կադաստրի կոմիտեում:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Ս. ԿՈՍՏԱՆԴՅԱՆ

24 հունիսի 2025
գ. Փամբակ



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՒՈՒ ՄԱՐԶԻ ՓԱՄԲԱԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Փամբակ համայնք
ՀՀ, Լոռու մարզ, գ. Փամբակ, +374 98393131, info@pambak.am

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

25 ՀՈՒՆԻՍԻ 2025 թվականի N 0670-Ա

ՀՈՂԱՄԱՍԻ ԳՈՐԾԱՌՆԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ ՓՈԽԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 43-րդ հոդվածի 3-րդ կետով, 35-րդ հոդված 16-րդ կետով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի թիվ 2387-Ն որոշմամբ հաստատված կարգի 29-րդ կետի «գ» ենթակետով և 48-րդ կետով, «Նորմատիվ իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 37-րդ հոդվածով, հիմք ընդունելով ՀՀ Լոռու մարզպետի N 01 /111.6/06462-2022 - 29/07/2022 գրությունը, ՀՀԿԿ-ի գույքի նկատմամբ իրավունքի (սահմանափակման) պետական գրանցման վարույթը կասեցնելու մասին 24.03.2022թ N Կ-24032023-06-0149 կասեցման որոշումը, **որոշում եմ**

1. Փամբակ համայնքի Դեբեդ գյուղի վարչական տարածքում գտնվող, համայնքային սեփականություն հանդիսացող, 06-034-0037-0007 կադաստրային ծածկագրից 0.01840 հա մակերեսով բնակավայրերի նպատակային նշանակության, այլ հողերի գործառնական նշանակության հողամասի գործառնական նշանակությունը, խանութ կառուցելու նպատակով, փոխադրել բնակավայրերի նպատակային նշանակության հասարակական կառուցապատման գործառնական նշանակության:

2. Հաստատել 06-034-0037-0007 կադաստրային ծածկագրով 0.01840 հա մակերեսով բնակավայրերի նպատակային նշանակության հողամասի ճշտված սահմանները համաձայն սույն որոշման հավելված հանդիսացող հատակագծի:

3. Հողամասի սահմանները որոշվում են համայնքի ղեկավարի կողմից հաստատված հատակագծով:

4. Անշարժ գույքին տրամադրել փոստային հասցե Փամբակ համայնք, գյուղ Դեբեդ 1-ին փողոց, 15 հողամաս փոստային հասցե:

5. Ուժը կորցրած ճանաչել համայնքի ղեկավարի 11 հուլիսի 2022 թվականի N 557-Ա որոշումը և 21 մարտի 2023 թվականի N 258-Ա որոշումները:

6. Սույն հողամասի նկատմամբ փոխված նպատակային նշանակությամբ իրավունքները ենթակա են պետական գրանցման, որն արտացոլվում է հողային ֆոնդի ընթացիկ հաշվառման տվյալներում և ամենամյա հողային հաշվեկշիռներում:



ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Ս. ԿՈՍՏԱՆԴՅԱՆ

25 հունիսի 2025
գ. Փամբակ



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՒՈՒ ՄԱՐԶԻ ՓԱՄԲԱԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Փամբակ համայնք
ՀՀ, Լոռու մարզ, գ. Փամբակ, +374 98393131, info@pambak.am

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

25 ՀՈՒՆԻՍԻ 2025 թվականի N 0671-Ա

ՎԼԱԴԻՄԻՐ ԿԱՐԵՆԻ ԷԴԱՐՅԱՆԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ
ՀՈՂԱՄԱՍԻ ՆՊԱՏԱԿԱՅԻՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ ՓՈՓՈԽԵԼՈՒ ԵՎ ՓՈՍՏԱՅԻՆ
ՀԱՍՑԵ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 31-րդ կետով, Հայաստանի Հանրապետության կառավարության 29 դեկտեմբերի 2011 թվականի N 1920-Ն որոշմամբ, Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի թիվ 2387-Ն որոշմամբ հաստատված կարգի 29-րդ կետի «գ» ենթակետով և 48-րդ կետով, Հայաստանի Հանրապետության վարչապետի 2009թ. դեկտեմբերի 22-ի թիվ 1064-Ա որոշմամբ ստեղծված քաղաքաշինական ծրագրային փաստաթղթերի մշակման աշխատանքները համակարգող միջգերատեսչական հանձնաժողովի 2024 թվականի օգոստոսի 12-ի N 2-17 դրական եզրակացությունը, ՀՀ Լոռու մարզպետի 18 հոկտեմբերի 2024 թ. թիվ 845-Ա որոշումը, Փամբակ համայնքի ավագանու 28 օգոստոսի 2024 թվականի N 096-Ա որոշումը՝

որոշում եմ
1. Փամբակ համայնքի Բազում գյուղի վարչական սահմաններում գտնվող, Վլադիմիր Կարենի Էդարյանի (ծնված 13.07.2002թ.) սեփականություն հանդիսացող, 06-023-0232-0067 ծածկագրով 0.16084 հա գյուղատնտեսական նշանակության 5-րդ կարգի խոտհարք հանդիսացող հողամասը փոխադրել բնակավայրերի հողերի նպատակային նշանակության, հասարակական կառուցապատման գործառնական նշանակության:

2. Հողամասի նպատակային նշանակության փոփոխության պահին առկա կադաստրային արժեքի տարբերության համար հողամասի սեփականատեր Վլադիմիր Կարենի Էդարյանին պարտավորեցնել համայնքի բյուջե (հողի օտարումից եկամուտներ հաշվեհամար՝ 900235422137) վճարել 800260 ՀՀ դրամ (ութե հարյուր հազար երկու հարյուր վաթսույն դրամ):

3. Փամբակ համայնքի Բազում գյուղի վարչական տարածքում գտնվող 06-023-0232-0067 ծածկագրով 0.16084 հա բնակավայրերի հողերի նպատակային նշանակության, հասարակական կառուցապատման գործառնական նշանակության հողամասին տրամադրել Փամբակ համայնք, գյուղ Բազում, 7 հողամաս փոստային հասցե:

4. Սույն որոշման 3-րդ կետով տրամադրված հասցեն ենթակա է պետական գրանցման:

5. Սույն հողամասի նկատմամբ փոխված նպատակային նշանակությամբ իրավունքները ենթակա են պետական գրանցման, որն արտացոլվում է հողային ֆոնդի ընթացիկ հաշվառման տվյալներում և ամենամյա հողային հաշվեկշիռներում:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Ս. ԿՈՍՏԱՆԴՅԱՆ

25 հունիսի 2025
գ. Փամբակ





ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՒՈՒ ՄԱՐԶԻ ՓԱՄԲԱԿ ՀԱՄԱՅՆՔԻ ԴԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Փամբակ համայնք
ՀՀ, Լոռու մարզ, գ. Փամբակ, +374 98393131, info@pambak.am

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

25 ՀՈՒՆԻՍԻ 2025թվականի N 0672-Ա

ԷՄՄԱ ԽԱԼԱԹԻ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆԻ ԿՈՂՄԻՅ ՕԳՏԱԳՈՐԾՎՈՂ ՀՈՂԱՄԱՍԻ ԵՎ ՇԻՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՆԿԱՏՄԱՄԲ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔԸ ՃԱՆԱԶԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Ինքնակամ կառուցված շենքերի, շինությունների եվ ինքնակամ գրադեցված հողամասերի իրավական կարգավիճակի մասին» ՀՀ օրենքի պահանջներով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 37-րդ հոդվածի 1-ին մասով, հաշվի առնելով «ԻՆԵՔՍ» ՍՊԸ-ի կողմից կազմված հողամասի հատակագիծը, չափագրման համաձայնությունը, ժառանգության իրավունքի վկայագիրը, ժառանգական գործ 76/20 նոտարական ակտի կողմից ' 741-020200918-84-4725497, ժառանգության լրացուցիչ վկայագիրը ' 7741-20221217-84-6538554, այն հանգամանքը, որ Էմմա Խալաթի Հարությունյանին հատկացված հողամասից՝ կադաստրային քարտեզագրման արդյունքում օգտագործվող հողամասը նախատեսված չէ այլ նպատակային և գործառնական նշանակությամբ օգտագործելու համար, ընդգրկված չէ ՀՀ Հողային օրենսգրքի 60-րդ հոդվածով նախատեսված սահմանափակումների ցանկում, ընդգրկված չէ ինժեներատրանսպորտային օբյեկտների օտարման կամ անվտանգության, ինչպես նաև հնագիտական պատմամշակութային հողերի պահպանման գոտիներում, չի սահմանափակում այլ անձանց իրավունքները և չի առաջացնում սերվիտուտ՝ **որոշում են**

1. Ճանաչել Էմմա Խալաթի Հարությունյանի /ծնված 01.11.1946թ./

